իւրում, և կոծ մեծ եթող Հռոմայեցւոցն։

Դոմետիանոս՝ որդի Վեսպիանոսի՝ և եղբայր Տիտոսի, սկսաւ յամի տեառն ՁԹ. ինքնակալեալ ամս ԺԳ։ Սա ոչինչ գործ այրութեան եբեր յանձն իւր, ո՛չ զհօրն և ո՛չ զեղբօրն, և զբազումս սպան ՚ի Սենատորացն և զամենայն ծանօթսն իւր. քանզի գիտէին զայպն և պակասութիւն նորա։ Սա երկրորդ հալածումն արար քրիստոնէից. սա լուաւ զՅովհաննու Աւետարանչէ, և յղեաց յԵփեսոս՝ եբեր զնա և եդ յեռս ձիթոյ. և իբրև ել անվնաս, աքսորեաց զնա ՚ի Պատմոս։ Սա զինքն կրկին Աստուած կոչել ետ, այսինքն՝ Աստուած Աստուած. սա ետ սպանանել զսուրբն Դիոնէսիոս ընկերօք իւրովք ՚ի Փարէզ քաղաքի. և բազում չարիս գործեաց. զոր տաղտկացեալ Հռոմայեցւոցն՝ սպանին զնա յիւրում պալատին ՚ի ՂԶ. ամի հասակի իւրոյ։

Հայ մատենագրութեան թուանշային գրադարան